

COUTAN: REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS
(SOUS LE PATRONAGE DE M. E. DUCLAUX)

ԳՈՒԹԱՆ

ՀՈԶԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Հ Ա Ն Գ Է Ս

Բ. ՏԱՐԻ

ԹԻՒ 11-12

1902

ՓՄԲԻՁ



Երբ, գութան, զա՛րի գութան,
որն եկել է նաչ դասել,
Առք շուք առք, խոփիտ զուրբա՛ն
Սրճնեալ է Ատաւած Տորալե՛լ:
Բաշիք եղօ, աւիտ Տառալ,
Բաշիք, բաշե՛ք, վար աննք
Տգտին արա՛, Բշիք Տառալ,
Ենք օնս որին նար աննք:
ՅՈՎ. ԹՈՒՄԱՆՆՈՆՈ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Բ - Տ Ն Օ Ր Է Ն

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Մ Ե Ծ Ա Տ ՈՒ Ի Բ Ե Ա Ն

Secrétaire: PAUL GÉRÉE

Directeur: K. MÉDZADOURIAN,

Rédaction: 53, Rue Boulard, PARIS (14^e)

ՄԻ

Մի՛ յանձնէք մեր ապագայի սերունդը պատահողին .
մի տաք մեր որբերը պատահական պատուելիներու , տէր-
տէրներու , իշխանուհիներու , կոմսուհիներու փայլուն եւ
խոստմնալից ապագայի մը յուսով , նոյն իսկ եթէ ատոնք
ներկայանան ձեզ վկայագրերով , կոնդակներով կամ հրո-
վարտակներով :

Ձեր տղը պղտիկներու հողին փրկելու կամ ապագան
ապա՛ովելու պատրուակին ասկ , զործի մարգիկ , իրենց
քօակը կը պարարեն եւ յաչս մարդ _ութեան բարի գործի
համբաւ շինելու կը նկրտին :

Եւրոպական երկիրներու որբանոցներուն վստահուած
որբերու բարոյականը , առողջութիւնը եւ նոյն իսկ կեան-
քը ամեն մի վայրկեան վստահի մեջ է :

Մեր պապերու անծանօթ առեւտուրը , այսօր դարա-
վերջիկ ձեռնարկ մ'է արեւմուաքի մէջ :

Բարեգործները , նոյն իսկ կրնան ծախել մեր որբերը :

ՉԳՈՒՇՈՒԹԻ՛ԻՆ , ՉԳՈՒՇՈՒԹԻ՛ԻՆ "" . . . :

Charrues à Vapeur

Locomotives à Vapeur

Camions à Vapeur

Tomberaux Routières

Rouleaux des Routes à vapeur

Շոգեշարժ արօրներ

Պողոսակերու շոգեշարժներ

Շոգեշարժ սայրակներ

Շոգեշարժ ցած սայրակներ

Պողոսակերու շոգեշարժ շղեր


De construction parfaite et d'une solidité à toute épreuve,
sont livrés des prix excessivement réduits par

John Fowler & Cie.

MAGDEBOURG

(Allemagne)

Փորձուած ասկուհութեամբ եւ ընտիր շէնքով , կը
զրկուին ամենաաժտան գներով Գերմանիոյ Մատչպուրկի
ԺՕՆ ՖՕՎԼԷՐ Ընկերութեան կողմէն :



ՇԱՐԼԱԹԱՆ

ԵՓՐԱՏԱՅ հովանի մեծանուն շարլաթաններու երրորդութեան՝ Օխընիկի, Հասեֆի եւ Հեֆիսի մրոս յիշատակին, որ ոչ եւս են:

Դեռ երկար ժամանակ չէ անցած, որ այս երեք «էզրայիլները» գրեթէ միեւնոյն ժամանակ կ'ապրէին Փոքր Ասիոյ մէջ:

Օխընիկի համրաւը տիեզերական էր, Պաղտատէն-Պասրաէն. Իրանէն-Թուրանէն ձայն կուտար եւ ան կողմերէն կուգար. եօթը ճիկէր, եօթը թոք, եօթը սիրտ, եօթը երիկամունք, մէկ խօսքով՝ մէկ մարդու մորթի ներքեւ՝ մարդկային եօթնական զոյգ եւ անզոյգ օրգաններ ունեցող եղական արարած մ'էր ան, որ իր մէկ հնարած դեղովը եօթնապատկելով իր գործարանները սրբազրած էր բնութեան գործը եւ անմահացնելու մօտեցուցած:

Մահկանացուներու եւ անմահներու միջեւ նոր էակ մ'էր ան. մարդոցմէ եօթն անգամ աւելի առողջ, եօթն անգամ աւելի խելացի եւ եօթն անգամ մահուան զիւսազրելու զօրութիւն ունեցող:

Ալ ո՞վ չէր հաւատար անոր ոյժին եւ դեղերու զօրութեանը:

Հասեֆին Ա. քաղաքէն էր. չարչի, զեղազաճառ, առեւտրական, զեղագործ, սափրիչ, բժիշկ եւ ճնճղերէնի հմուտ: Անրաժան իշուկը տակը եւ զեղատուն պարկը կրունակը՝ անդադար, ամառ, ձմեռ գիւղէ գիւղ կը թափառէր Հասեֆին:

Հոն՝ հէպիկէին մէջ՝ ունէր աշխարհի դեղերու իսկութիւնները, որոնց իւրաքանչիւրը մէկ մէկ փանասէներ

էին անհատնում ըլլալու առաւելութիւններով : Ունէր մանաւանդ երկու ամենաբոյժ գեղեր , մին փոշի՝ միւսը հեղուկ , ասնքաւանկիօն եւ քանքաւանկիօն էին ատոնք , որոնց զուտն ու անխարդախը միայն ինքը կը ճանչնար եւ միայն իր քովը կը գտնուէին :

Սանքաւանկիօն եւ քանքաւանկիօն ուղղակի հնարիչն բերել կուտար , որ կը բնակէր այն աստիճանը « ճիւղիկ » ներու երկիրը :

— Հասէքին կը ճառէր եայցզգ քօզի եւ Լօքմանի փոշիներուն վրայ , որոնցմէ մին՝ կոյրերու աչքերը կը բանար . իսկ միւսը հազար մասերու կտրտուած մարդկային մարմնոյն նախկին ձեւն ու հոգին կուտար : Երջանիկ պատահումով մը « Վեցհազարեայ » կարգացող աէրվիչէ մը ձեռք ձգած էր Հասէքին կէս-կէս ցորեն ծանրութեամբ ետլտող թօզի եւ Լօքմանի փոշի . թէ՛ գիւղացիք , թէ՛ քաղաքացիք կը հաւատային անոր բժշկական զօրքին եւ ոյժին :

Քաղքի մեծ դեղագործը՝ սրուն քովը կը հաւաքուէին ժամանակի վկայեալ եւ կարող բժիշկները , Հասէքի աշակերտն ու աշան էր :

Հասէքին հետ վի բառը խօսք գլուխ գործածելուն համար՝ « Հետ վի հէքիմ » անունով ալ կը ճանչնային :

Հէքիմը բժիշկ ըլլալէ աւելի վիրաբոյժ եւ « պէրպէր » էր : Անոր նիշաէրը հոգի կուտար կամ հոգի կ'առնէր : Այս զործիքով՝ վիթխարի , պարթեւ եւ լեռնամասն մարդոց խենթաբիւնը կը հանէր . նոյն նիշաէրով , բայց այս անգամ , վտիտ , նիհար , տկար եւ մահամերձներու թունաւոր կամ տկար արիւնը կը վազեցնէր :

Հէքիմի նիշաէրին ազդեցութիւնը վճռողական էր . առողջը անկողին կը ձգէր . իսկ հիւանդը անդին կը զրկէր :

Պկագաւի , քթի , բերնի , կոկորդի , մասի եւ ծծի ուռեցքները , քաղցքեղը , պալարները բուժելու համար միակ եւ վերջնական « մէհլամ » մը ունէր , որը յուսահատական վայրկեաններու կը գործածէր , հիւանդի տիրոջը հաւանութիւնը առնելէ ետքը՝ անոր խօսքին նայելով իր ամենաոյժով դեղը կամ կը մեռցնէր կամ կ'ազատէր , եթէ մեռնի հիւանդը կ'ըսէր՝ չարչարուելէ կ'ազատի , եթէ ապրի աչքերն իս լոյս :

Կենսատու կամ մահահրաւէր ազդեցիկ մէկլամբ գաղտա-
գողի կը պատրաստէր ապակիի փոշիով՝ ճերմակ կատուի
մազով եւ արդար իւզով :

Շարլաթան բառը ցոյց չի տար միայն այն մարդը, որ
պերճ խօսքերով ու ազւոր բառերով ժողովուրդը իր գլու-
խը կը հաւաքէ կամ գիւղէ գիւղ՝ երկրէ երկիր թափառելով
իր դեղերը կը ծախէ :

Շարլաթաններ են այն խորամանկները, որոնք կը
խաբեն հասարակութիւնը, իրենց չգիտցած ուսման, գի-
տութեան եւ արուեստին վրայ խօսելով կամ գրելով :
Դարձեալ շարլաթաններ են անոնք, որոնք իրենց հմտու-
թիւնը կամ ծանօթութիւնները իբրեւ միջոց կը գործածեն
օգտուելու համար ժողովրդի միամտութենէն ու տգիտու-
թենէն : Մարդկային ընկերութեան մէջ չի կայ դասակարգ
մը, որ ունեցած չըլլայ եւ չունենայ իր շարլաթանները :
Խաբեբաները, որոնք իրենց նմաններու մտքի սկարու-
թեանը կամ սգիտութեանը հետ կը խաղան եւ անոնց մէջ
կը փնտռեն իրենց հացն ու գիրքը, շարլաթան կոչուելու
արժանի են, ի՞նչ վիճակի եւ պաշտօնի տէր ալ եղած
ըլլան : Ամեն տեղ՝ գիւղերու եւ մայրաքաղաքներու,
արքայական պալատներու, կաթողիկոսական եւ պապա-
կան գահերը չըջապատող որբազան եպիսկոպոսներու գա-
սին մէջ կը գտնուին շարլաթաններ եւ ամենէն ահաւո-
րափայլները :

Մանաւանդ հիմա շատ են այս մարդիկը, որոնք խա-
փելը հոմանիչ կը համարին խելքի կամ իմաստութեան,
իսկ խափուիլը ապշութեան կամ անխելքութեան : այդ
սկզբունքի տէր մարդոց համար մարդկային ընկերու-
թիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ վայրենի անտառ մը՝
որուն մէջ ապրող գաղտնիները իրենք են եւ իրենց մէջէն
զօրաւորագոյնը իրաւունք ունին սկարները յօջօտելու եւ
լափելու :

Ըսինք թէ՛ մարդկային ընկերութեան ամեն դասա-
կարգին մէջ կան շարլաթաններ, բայց բազմաթիւը վը-
տանգաւորները հասէքիներու : հէքիմներու եւ օխտըճի-
կէրներու դասին մէջ կը գտնուին, որոնք մարդուն առող-

ջութիւնը առեւտուրի առարկայ են դարձուցած եւ անոր հետ կը խաղան անխղճութեամբ :

Թող չի կարծեն թէ՛ վարպետ ու խելացի գործ մը կը կատարեն գիւղացին , պարզ մարդիկը կամ տկարն ու անկարը համոզելով , առածը ինչպէս կ'ըսէ « ծո՛ն ինկողը օձը կը փաթտուի » , անանկ ալ հիւանդը հանդիպողին . այդ միջոցին է որ շարլաթանը կ'ընէ իր հունձքը , օգտուելով նեղ հանգամանքներէ : Այդ սփռալից արուեստը ի գործ դնողներու մեծամասնութիւնը՝ գրեւ-կարգաւ չգիտցող , աղէտ անկարողներ են , որոնք իրենց նախկին արուեստով եւ գործով օրական հացերնին չի կրնալ ճարելով՝ այս մահահոտ ասպարէզը մտած են , իբր վերջին ապաւէն իրենց անպէտ գոյութիւնը քարշ տալու համար : (Շատ մը տէրտէրներու եւ վարդապետներու ականջին՝ այսօր միայն պըզըզզը) : Ասանկ ազուէսները ամեն ատեն ամբոխին մէջ իրենց որսը կը գանեն , բայց պէտք է գիտնալ թէ՛ գազանական անխղճութեամբ , աջուձախ մահ կը ցանեն :

Սանթարամէթիքոններով եւ թանթարամէթիքոններով ինչքա՛ն մարդիկ կը սպաննեն եւ ինչքա՛ն մարդիկ ալ անբուժելի եւ հիւժող ախտերու կը մատնեն . այս շարլաթանները՝ հիւանդութիւններէ աւելի իրենք կոտորած կը գործեն , երբեմն մահը փութացնելով , երբեմն սպաննելով , երբեմն ալ անբուժելի հիւանդութիւններ ծնեցնելով : Շարլաթաններու մահահրաւէր գործունէութիւնը մէկ կողմէն չեզոքացնելու՝ միւս կողմէն ալ իսպառ ջնջելու համար՝ վարժապետն ու աէրտէրը , թաղականն ու տանուտէրը բարոյապէս պատասխանատուներ են եւ պարտական հալածել այդ սփռագործները եւ յանձնել դատարաններու :


Անձնուէր բժիշկներ հին սերունդին՝ իսկ նոր սերունդին ալ կիրակնօրեայ ուսումնարանական-դասախօսութիւններով , թէ առողջաբանական ծանօթութիւններ տան՝ մեծադոյն ծառայութիւնը մատուցած պիտի ըլլան փողովուրդին : Իարձեալ մեր հասարակութեան մէջ՝ բժշկական եւ առողջաբանական տարրական ծանօթութիւնները կարելի է եւ պէտք է տարածել ու ընդհանրացնել աժանագին եւ զբւրամատչելի հրատարակութիւններով , որուն ատաջին յաջող փորձը կատարիցին մեր երկու պատուական բարեկամները բժը-

կարապետ Բուսուղեան Վահան Արծրունի Ռուսիոյ եւ կովկասի մէջ:

Բժշկական ծանօթութիւններու ժողովրդացումովը շար-
լաթաններու գիմակը ոլիտի իյնայ, կորսնցնելով իրենց
վարկն ու վստահութիւնը եւ թերեւս օր մ'ալ բոլորովին վեր-
նան աշխարհքի երեսէն: Սուտ կը գրուցին անոնք, որոնք
կ'ըսեն թէ՛ բժշկական գրքեր կարգալը օգտակար ըլլալէ
աւելի փաստակար կ'ըլլան. ընդհակառակը՝ մենք խորհուրդ
կուտանք բոլոր անոնց, որ իրենց գոյութիւնը պահպա-
նել եւ առողջ պարել կ'ուզեն, կարգան իրենց հասկցած,
բժշկական եւ առողջապահական գործեր: Լաւագոյն եւ հաս-
կնալի են Բուսուղեանի եւ Վահան Արծրունիի հրատա-
րակութիւնները, որոնք մէկ մէկ հիւանդութիւն եւ
ախտ կը ծանօթացնին պարզ եւ դիւրըմբռնելի բացատրու-
թիւններով:

Երկու պատուական բժշկապետներու հրատարակու-
թեանց իւրաքանչիւրը, հակառակ իրենց աժան գնոյն
եւ փոքրիկ ծաւալին, հաստատոր հաստորներէ աւելի ար-
ժէք ունին եւ անպայման օգտակար գործեր են:

Մենք գիտենք որ, հէքիմներէ եւ հասէքիներէ զատ,
կան վկայեալ եւ համալսարանական բժիշկներ ալ, որ կը
հակառակին ժողովրդական բժշկական գործերու ժողովըր-
դացմանը եւ կը դատապարտեն ըսելով որ, — ատանկ գոր-
ծերը կոյրին ձեռքը արուած երկրեքան դանակին դերը
միայն կրնան կատարել: Մենք, այդպէս ստախօս սօք-
թէօրներու կ'ըսենք, թէ իրենք մէկ մէկ շարլաթաններ
են, կ'ուզեն խորհրդաւոր գաղտնիքի շուքին մէջէն քա-
լել՝ վախնալով որ եթէ վարագոյրը վեր առնուի իրենց
ագիտութիւնը եւ իրենց գործած ոճրալից գեղծումները
երեւան կ'ելլեն:



ԳԻՒՂԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Լեռներու, ձորերու եւ դաշտերու բնակիչները. 5—Գեղջուկին իր ապրած միջավայրին հետ ունեցած յարաբերութեան մասին խօսելէ առաջ, որ իր սովորութիւնները եւ բնակութեան եզանակը անոր համար կ'ստեղծէ, անօրուա չըլլար բառ մը աւելցնել այն տարբերութեանց վրայ, որ ընդհանրապէս օգին եւ մանաւանդ հողին բնութիւնը գլխաւորաբար իր կազմութեան վրայ կը ներգործեն: Գիւրին մշակութեան վարժ դաշտերու եւ խոնաւ ձորերու բնակիչները լեռնաբնակներուն չեն նմանիր, որոնք ստիպուած են ամենամեծ ճիղերով ապաշնորհ հողէ մը սաանալ արտադրութիւնները:

Լեռնային բարձր սարահարթ գաւառներու մէջ, հողին դիրքը որքան որ մթնոլորտային յաճախ եւ յանկարծական փոփոխութեանց աեզի կուտայ, սակայն հոն ծծած օդերնուն մաքրութիւնն ալ բոլոր պործարանական պաշտօնները ժիր եւ աւելի զօրաւոր կ'ընէ: Այս մասին մէջ կը շերենք Միացեալ-Նահանգներու Հարվըրտի համալսարանին (Harvard University) բրօքէսօր Ուարտի (ward) մէկ փորձը, որ կատարած է Բերուէի էլ Միւսի լեռան վրայ, որ 5,760 մէթր բարձրութիւն ունի:

4,710 մէթր բարձրութեան վրայ 100 մէթրի չափ ոտով քալելով, ստիպուած է երկու անգամ կանգ առնել շնչելու համար: Իր բարձրանալէն 12 ժամ առաջ բազկերակը բոպէն 91 կը զարնէր, տաքութեան աստիճանը 37 էր եւ շնչառութիւնը 20 անգամ սեղի կ'ուեննար, ինչ որ բնական է: Բայց լեռան գազաթը բարձրացած ժամանակ, բազկերակը 150 էր, կենդանական ջերմութեան աստիճանը 36°, 2 իջած էր, իսկ շնչառութիւնը 32 էր բարձրացած: Չարկը համրիլու համար հարկ չկար բազկերակը քննելու, որովհետեւ սրտի բարախիւնը չաա յստակ կը լսուէր: Ուրեմն, այս փորձէն պարզ կը հետեւի, որ լեռնային օդը իր մաքրութեան եւ ճնշումին նուազութեան պատճառով, շնչառական եւ սրեան շրջանի պործարաններուն պաշտօնը կը ժրացնէ ու կը զօրացնէ:

Լեռնային բնակութիւնները աւելի խեղճուկ են, բայց

զիրենք չըջապատող հողերուն բաղադրութիւնն ալ վատա-
 ոողջ ըլլալէ հետո է, բան մը, որ դաշտերու եւ ձորերու
 հողին մէջ յաճախ կը պատահի: Բարձր դիրքը ջրերու հա-
 ւաքման բնուէ նպաստաւոր չէ, որովհետեւ հողին դարվա-
 րութիւնը գրեթէ միշտ կ'ստիպէ ղէպի վար հոսիլ: Բարձր
 վայրերու մէջ թէեւ ընդհանրապէս ճահճաւորման այնքան
 նպաստաւոր կաւային հողեր կը գտնուին, սակայն վերո-
 յիշեալ պատճառներով անփութ կը դառնան:

Գրեթէ ամէն տեղ, անոնք որ լեռնային երկիրներ կը
 բնակին, եղանակներուն անբարեխառնութեանց եւ մթնո-
 լորտային փոփոխութեանց պատճառով ծնունդ առնող հի-
 ւանդութեանց ենթակայ կ'ըլլան: Չմեղը, ցրտին սաստ-
 կութենէն պաշտպանուելու համար բնակարաններու մէջ
 փակուելով ու մեկուսանալով կ'ապրին, բան մը, որ դաշ-
 տարնակները սովոր չեն ընել, եւ ասոնք՝ լաւ անունդի
 մը եւ տաք պահող հաղուսաներու պակասութենէն միւս
 գիւղացիներէ աւելի կը նեղուին:

Լեռնաբնակները՝ սարւոյն չորս հինգ ամիսները առ
 հասարակ խրճիթի եւ զոմերու մէջ փակուած, էրիկմարդ,
 կին, տղաք եւ ընտանի անասուններ խառնիխուռն միասին
 կը բնակին, ինչպէս Ալպեան, Տաւրոս, Սասուն եւ այլ
 լեռներու բնակիչները: Այսու հանդերձ, լեռնաբնակները
 ուժեղ եւ տոկուն կազմի տէր են: Թէեւ ընդհանրապէս
 դաշտարնակներէն աւելի կարճահասակ են, բայց հասակի
 բարձրութեան կողմէ կորսնցուցածնին, մկնային զար-
 ւացման կողմէ կը շահին:

Ասկէ զաս, լեռնաբնակներուն մէջ ախաւորներուն
 եւ հիւանդներուն թիւը դաշտարնակներէն շատ քիչ է:

Ժընէվցի Լօմպարտ լեռնային գիրքին մահաթիւնն վը-
 րայ բարեփոխիչ ներգործութիւն մը ունենալը կը յիշէ,
 սակայն պլխաւորաբար այս արդիւնքը իրականապէս միջին
 լեռնային երկիրներու մէջ կը նշմարուի:

Բարձրագիր երկիրներու մէջ, ձմրան եւ գարան սաս-
 տիկ ցուրտը մահաթիւնը կաւելցնէ, եւ նոյն իսկ կը չափա-
 զանցէ, մինչդեռ ամրան եւ աշնան չափաւոր տաքը, մեռ-
 նողներուն թիւը պակսեցնելու համար, երթալով նպաս-
 տաւոր ազդեցութիւն մը կ'ունենայ: Սակայն ընդունուած
 իրողութիւն մըն է, որ լեռնաբնակներու բաժին ինկած
 աղքատութիւնը, շատ անդամ կը հակազդէ իրենց կազմու-

Թիւնը գերազանցօրէն զօրացնելու եւ աճեցնելու յատուկ ֆիզիքալան գործունէութեան բարեբաստիկ ներդրածութիւնը : Ասիկա դէպի դաշտերը եւ քաղաքները դալթիլու զօրեղ պատճառներէն մէկն է : Սակաւապետ, խելացի եւ ճարպիկ ըլլալով, ընդհանրապէս իրենց յատուկ ձեռնարուեստներով կ'զբաղին եւ շատ անգամ երբ որ համեստ գումար մը խնայելու ըլլան, կ'աճապարեն վերստին իրենց լիւնները դառնալ :

Բարձր լիւններով շրջապատ կամ խիստ նեղ կտպաններով ուրիշ ձորերու հետ հաղորդակցող ձորերու մէջ բնակող գիւղացիներ, ծանր եւ շարունակ մշուշապատ մթնոլորտի մը մէջ կ'ապրին : Բազմաթիւ ակունքներու պատճառով հողին խոնաւութիւնը գրեթէ միշտ անշէջ կը մնայ : Մանաւանդ, անձուկ ձորերու մէջ՝ որոնց հարաւակողմը տաք եւ խոնաւ մթնոլորտ մը կը ներկայացնէ, նեղ կասրաններու մէջ՝ որտեղ արեգակին ճառագայթներ եւ ժայտերէն անզրադարձող տաքութիւնը մթնոլորտը կը տաքցնեն, եւ ուր օդը բնաւ չնորոգուի, այո՛, ասոնց մէջ ապրողները աւշային կազմութիւն մը կ'ունենան, որ վերինք արամազիբ կ'ընէ բոլոր աւշային հիւանդութիւններու, ասոնց մէջ կը տիրէ նաև տեղսկան խպիսը (goitre), ինչպէս Ակնայ ձորին մէջ :

Բարձր ձորերու մէջ շինուած գիւղերը ընդհանրապէս ծուռ եւ շեղ հողի մը վրայ եւ անոր յատակէն անցնող վրտակէ մը քիչ հեռու կը գտնուին : Ասիկա բարեբաղդ դիրք մըն է, որ անմաքուր ջրերուն հոսումը կը դիւրացնէ եւ միջավայրին ստողջաւէտութեան անվրէպ կը նպաստէ : Բայց շատ անգամ բլուրներու, սարերու գագիվարին կրութեամբ բնակարանները մասնակի կերպով հողին մէջ խրուած են, արտաքին խոնաւութենէն ապահով :

Այն ձորերը, որ իրենց գիւղքով, միշտ հիւսիսային քամիներով կը մաքրուին, ամենէն ստողջարարներն են, ասիկա մանաւանդ հարաւային Եւրոպայի համար շատ ստոյգ է, ուր վաղուց հաստատած են թէ՛ հիւսիսային քամի ընդունող սարերու գագիվարը հարաւային գագիվարէն քիչ ենթակայ է տենդային համաճարակներու :

Հիւսիսային ցուրտ քամիները՝ դարչանոտ անտարուրումներու ճարակման նուազ նպաստաւոր են, եւ անուշա այս պատճառով է, որ Ալպեան լեռներէն փչող քամիները վեհնտիկի ծովալճակները շոյելով, այս վերջին-

ները իրենց համեմատական ախտազերծութիւնը մեծ մասով անոնց կը պարտին . մինչդէ՛ս Թոսքանայի ճահճուտին վրայէն փչող հորաւային քամիները , իրենց անցած բոլոր ճորերուն եւ հովիտներուն օդը թունաւորելով զանազան անդերու պատճառ կը դառնան :

Դաշտերու մէջ է , որ միեւնոյն ժամանակ ամենախեղճ կամ ամենարարուած երկրագործ ժողովուրդներու կը պատահինք :

Այս տեղ է , որ հողը՝ երբեմն բազմաթիւ լճակներով եւ երբեմն վտակներով ախտաբեկ՝ գիւղերու մեծ տեղախտ կոչուելիք *անախսը* (impaludisme) , ճահճային թունաւորումը կը պատրաստէ : Բայց այստեղ է նաեւ , որ երկրագործական յառաջգիւծութիւնը հրաշքներ գործելով , կարող է երկիրը բարեփոխել եւ կերպարանափոխել , առողջարարութեան եւ արդիւնաբերութեան կրկնակի տեսակէտով յուսացուած բարիքը արտադրել : Ասոր համար գիւղացին պէտք է բաւական կրթուած եւ յառաջգիմասէր ըլլայ , հետեւի դարուս եւ ժամանակիս երկրագործական շարժումներուն , եւ միջավայրին ու ապրած հանգամանքներուն համեմատ կարեւոր փոփոխութիւններ ներմուծէ : Այն ժամանակ , անապատները մէյմէկ ուլասիսներ , ճահճուտ վայրերը մէյմէկ զբախտներ կը դառնան . չէն ու ծաղկած գիւղերու , դեղատեսիլ կանանչազարդ դաշտերու մէջէն անցնող ճամբորդը անբացատրելի գոհունակութիւն մը պիտի զգայ եւ զղխիչ սպաւորութեան մը յափշտակութեան մէջ զանոնք չէն ու բարբաւած պահող գիւղացիները պիտի օրհնէ . . . :

Ընդհանրապէս բարձր դաշտերը աւելի առողջարոր , աւելի հովահար են , ամեն աարիքի , ամեն խառնուածքի եւ ամեն կազմի կը յարմարին : Այստեղ , մարդիկ՝ իրենց հողին դիւրքը շատ անգամ ջրերու հաւաքման նպաստող ցած եւ խոնաւ դաշտերու բնակիչներէն աւելի զօրաւոր եւ աւելի ուժեղ են :

Տօք. 4. Յ. ՓՍՇԱՅԵԱՆ



ԲՈՅՍԵՐԻ մարմինը բաղկացնող տարրերը միեւնոյն են կենդանիների հետ . որովհետեւ այս վերջիններն ուղ-
ղակի թէ անուղղակի սննդառութիւն բոյսերէն կը բղխի :
Բոյսերն են որ անզուգական յատկութիւնը ունին երկրիս
արգանդէն հազար եւ մի , գէշ աղէկ բաղակցութիւններով
հատուկոտոր կարգ մը մարմիններուն , իրենց կազմին մէջ
պատրաստել եւ ամբարել այն ամեն բաները , ազոնց՝ ու-
րոնց կենդանիներու կեանքը զսյութիւն պիտի չունենն որ :

Երկրագործութեան համար երկու կարեւոր տեսակէտ-
ներով հարկաւոր է անոնց ծանօթութիւն : Նախ՝ գիտնալու
համար որ բոյսերը առհասարակ իրենց կանոնաւոր եւ լիա-
կատար աճումին եւ պաղարերութիւն համար ո՞ր տեսակ
նիւթի եւ պայմաններու պէտք ունին : — Եւ երկրորդ՝ որ
այդ բոյսերից որո՞նք առատ , յարմար եւ գիւրիին կերպով
կրնան հայթայթուիլ եւ մշակուիլ կենդանիներու սնուն-
դին եւ ուրիշ զանազան պէտքերու համար : —

Գիտութեան ծանօթ բաղմամբիւ տարրերէն շատ քիչեր
են որ բոյսերու կազմութեան մէջ կը մտնեն եւ այն ալ մի
քանիսէն զատ շատ քիչ եւ անորոշ չափերով , հետեւելով
բոյսերու քնութեան : Ասոնց թիւը տասնեակինգ չանցնիր
եւ որոնցմէ չորսը որ «գործարանական տարրեր» անուանով
ծանօթ ամենամեծ տեղը կը գրաւեն , կազմելով կեանքի
հիմը բնածուխ , թթուածին , ջրածին եւ բորակածին :

Ասոնցմէն զատ կան նաեւ ֆոսֆոր , ծծումբ , քլոր ,
աւազածին (silicime) , մետաղակերպիներ եւ երկաթ , սոտիում ,
բոթասիւմ , մսկինէզիում , կրածին (calcium) եւ մանկանէզ ,
աւելի կամ նուազ չափով ու կարեւորութիւնով :

Իսկ երբ այս բոլորէն դուրս երբեմն կամ յաճախ կա-
րելի է գտնել նաեւ իօտ , պոօմ , պլինձ , կապար , ղէնկ ,
արսէնիք , ալիւմին , արծաթ եւն . եւն . , ատոնք պար-
զապէս պատահական մարմիններ են եւ ոչ պէտքական :
Գտնուելով արմատնին մատչելի ջրին մէջ լուծուած վի-
ճակի մէջ եւ միւսներու հետ ծծուած , ատոնք կրնան լինիլ

բոյսին համար երբեմն անվտանգ եւ երբեմն նաեւ զինք թունաւորող եւ վնասող :

Յիշեալ չորս գործարանական տարրեր միասին կը կազմեն 95% բուսական կազմութիւն, իսկ 5%՝ մնացած զանազան մետաղ ու մետաղակերպերը, ինչ որ սակայն չի նշանակեր իրենց անկարեւոր լինելը : Բայց միայն բնածուխը վեր առած առանձինն գրեթէ բոյսերի կէսը կը կազմէ քանակութիւն մը ուրիշ եւ շատ հեռի չէ կենդանիներու մարմինը :

Օգի թթուածնից զատ սակայն, որ կրնայ նաեւ ուղղակի տերեւներու շնչառութիւնով դուռ վիճակի մէջ ծըծելի . միւսները երբէք ինքնին եւ առանձին վիճակի մէջ գործածելի չեն բոյսին համար : Ատոր համար հարկ է որոշ ու ծանօթ բազազրութիւններ, սուանց որոնց այս տարրերքները անմատչելի պիտի մնային կեանքին :

Այսպէս իր քանակութիւնովը եւ կարեւորութիւնովը առաջին եւ ամենաշատ անզը գրաւողը բնածուխը, օգէն կը ծծուի լոյսին ազդեցութեան տակ, բոյսերու կանաչ մասերը կազմող բջիջներու միջոցով եւ ատոնք չեն կարող այդ պատուական մարմինը ընդունիլ եթէ ոչ ամխաթթուի բազազրութեան տակ : Ու այդ ծծողութենէն յետոյ է որ բոյսերու տերեւները մասնաւորապէս տարբալուծելով ամխաթթուն, բնածուխը վար կը դնեն եւ թթուածինը ազատ կը թողուն :

Այն բոյսերը միայն որ կանաչ բջիջներ չունին բնականէն, եւ կամ այնպիսի տեղեր ծլած են ուր բնաւ լոյս չեն ստանար, յիշեալ կարողութենէն զուրկ՝ այդ պէտքը կը հոգան իրենց արմատներու միջոցով բնածուխ պարունակող զանազան նիւթերի ծծումով, ինչպէս սուրկեր եւ կամ մուխ ու խոնաւ ստորերկրեայ մասաններու մէջ ինքնին ծլիլ սկսող գետնախնձորներու ցօղուններ :

Այս վերջին պարագայէն զատ, որ երկրագործական տեսակէտով կարեւոր լինելէ հեռի է, ինքնին հասկնալի կը դառնայ որ բնածուխի ուղղակի ամբարումի երեւոյթը բնութեան ամենամեծ բարիքն ու ձեռնաւորութիւնն է գէպի հողագործը : Եթէ պէտք լինէր անոր համար ալ արհեստական միջոցների զիմնէ՝ անտարակոյս հասարակ ամուսին պինը, իրեն ամենամաքուր տեսակի—ազամանդի արժէքին պիտի բարձրանար . . . :

Թթուածինը նոյնպէս կարեւոր բոյսին մէջ կը մանէ երկու ճանապարհներով. շնչատութիւնով անբուսներու միջոցով եւ բոյսին արմատներով բազազրուալ վիճակի մէջ, ինչպէս օրինակի համար ջուրը գործարանական զանազան պարարտութիւններ:

Նաեւ այսպէս ջրածինը, զոր բնութիւնը առատ կերպով արամագրած է բոյսին սնընդեան համար:

Բորակածինը թէեւ նախորդ երեքի չափով չի դուռուիր բոյսերու բազազրութեան մէջ, բայց իր գոյութիւնը երկրագործին համար ամենաշահեկանն է. նա է որ իբր պարարտութիւն ամենէ աւելի թանկ արժէ եւ կոնէ: Այն ժլատութիւնը, որ բնութիւնը ցոյց կուտայ այս թանկագին տարրին նկատմամբ դէպի բոյսերը, զինք պարունակող մարմիններ եւ աղեր ամենամեծ եւ կարեւոր տեղը կը բռնեն պահանջուած պարարտութիւններու շարքին մէջ:

Բորակածինը չի նայած որ մթնոլորտական խտնուորդին 79 աճ 100 կը գրաւէ եւ հետեւաբար ամենաառատ տարրերից մինը (մանաւանդ երբ նկատի ունենանք որ այնքան առատութիւնով հոգացուող բնածուխը, ածխածութեւի բազազրութիւնով նոյն այդ մթնոլորտին հազիւ 3/10,000 մասը կը կազմէ): Սակայն ինքնին զուտ վիճակի մէջ բոլորովին անընդունակ է օգտակար դառնալու, հոն՝ այդ անուռն տարածութեան մէջ, իր ներկայութիւնը գրեթէ անմատչելի է անոնց, ինչպէս եւ կենդանիներուն համար, որոնք սակայն առիթ ունին մէկ վայրկեանի մէջ գոնէ 15—20 անգամ զինքը շնչելու:

Այս դժբաղդութիւնը թէ բարեբաղդութիւնը յառաջ կուգայ բորակածինի այն բայառական յատկութիւնէն, որով նա անմիաբան մարդոց պէս, թթուածինին հակառակ շատ չի ախորժիր օտար եւ խնամէական կապակցութիւններէն: Այնպէս որ բորակածնային բազազրութիւններ թէեւ բաւական թւով մը ծանօթ, սակայն միշտ հարկ եղած առատութիւնով չեն գտնուիր եւ հետեւաբար երկրագործութեան համար սուղ արժեն:

ՄԻՔ. ՆԱԹԱՆԵԱՆ

ԿԱԿՂԱԽՏ (ՖԼԱՇԸՌԻՒ)

Բասդէօն իր ուսումնասիրութիւնները դեռ չըրած, շերմարուծը յուսահատեցնող այս հիւանդութիւնը, արգէն աշխարհի ամեն կողմերը տարածուած էր եւ սարսափեցնող կոտորածներ կ'ընէր:

Յըլաշըրին (պայկընլըք) ժառանգական եւ փոխանցող հիւանդութեանց կը նմանէր, երբեմն մէկ քանի տարի երեւան չէր ելլեր, որով մէկ քանի սերունդներ կազատէին այս ցաւէն, բայց յանկարծ աւելի ոյժով եւ կատաղութեամբ երեւան կուգար:

1853 թուին Ֆրանսան 26 միլիոն քիլօկրամ բոժոժ (խոզակ) քաղած է, մինչդեռ 1865ին՝ հիւանդութիւնը երեւան ելլելով այդ քանակութիւնը իջեցուցեր է 4 միլիոն քիլօկրամի:

Մեծ գիտնականի աշխատութեանց շնորհիւ, այս հիւանդութիւնը թէեւ իր առջի կատաղութիւնը չունի, այնուհանդերձ նոյն իսկ զարգացած շերամարուծ երկիրներու մէջ, երբեմն երբեմն իր գոյութիւնը ցոյց կուտայ, կարծէք միշտ ներկայ է եւ պատրաստ երեւնալու. ժամանակ ժամանակ մէկ քանի տարի կը քնանայ, բայց մէկէն ի մէկ կրկին կ'արթննայ:

Մեր ուսումնասիրած նախընթաց հիւանդութիւնը՝ բէպրինը՝ հիմա կարեւորութիւն ունենալէ բոլորովին դադրած է, ինչպէս ա՛ս, իր ինքնաբերաբար երեւնալովը, անկանոն ընթացքովը, իր պատճառներու պարզ չըլլալովը բէպրինի հիւանդութեան բնաւ չի նմանիր:

Յըլաշըրին շատ աւելի կը նմանի մարդկային հիւանդութեանց: Ամեն հասակի շերամներ կրնան Փլաշըրիով հիւանդանայ, նոյն իսկ առաջին հասակի ամենափոքրերը, բայց հիւանդութեան ըրած կոտորածը աւելի աղէկ կը նշմարուի եւ հաստիւտը, մեծցած շերամներու վրայ:

Հիւանդութիւնը կը յուսահատեցնէ շերամապահը, երբ երեւան կ'ընէ չորրորդ հասակի շերամներու մէջ, որովհետեւ այն ժամանակ է որ շերամները սովածի նման մեծ քանակութեամբ կեր կը լափեն: Ամեն անգամ որ շերամները քուսէ մը կ'արթնան, հիւանդութեան նախախալապեա նշանները կը տեսնուին՝ անկողիններուն տակը մե-

ուածներ կը գանուին եւ այլն . ենթադրենք թէ այդ նշանները շերամապահին ուշադրութենէն վրիպին եւ աննշմարելի անցնին , այն ատեն պիտի կարծէ պահ մը թէ՛ իր գործը յաջողութեան մէջ է . մէկ մըն ալ յանկարծակի կերպով շերամները ուտելէ կը դադրին , անբացատրելի թմբութեան մը մէջ կ'իյնան , կարծես թէ տերեւներէն կը փախչին , հիւժուած , մաշուած կը պառտին կամ կ'երթան կը քաշուին անկողիններու եզերքը ու հոն անշարժ կ'երկըննան կը մնան , թէեւ այնպէս կ'երեւի որ սակաւին ողջ են , բայց բոլորն ալ մեռած են արդէն . մեռած ըլլալնին հաստատելու համար միայն բաւ է ձեռքով դպչիլ :

Քոժոժնին հիւսելու համար ցախ բարձրացող հիւանդ շերամներու մէկ մասն ճիւղերուն վրայ անշարժօրէն կ'երկըննան մինչեւ իրենց մահը , ասոնցմէ ոմանք վար կ'իյնան , ոմանք ալ իրենց սուր թաթիկներով ցախը ճանկելով օդին մէջ կախուած կը մնան :

Շատ քիչ վերջը սատկած շերամները կը կակուղնան , իսկ 24—48 ժամ վերջն ալ սեւնալով կը փտին : Գանեցընոյ եւ զգուելի հոս մը կը բուրեն սեւցած շերամները :

Հիւանդութիւնը արագընթաց եւ շանթահարող է , այնպէս որ՝ ամենէն ընտիր շերամատուներու որդերը մէկ քանի օրէն , շատ անգամ ալ մէկ քանի ժամէն՝ անխնայ կերպով կը ջարդուին :

Միքրոսքոփային քննութիւնը ցոյց կուտայ արագաշարժ վիպրիոններ կարագայիններու յար եւ նման , որոնցմէ մէկ քանին փայլուն forpիւսիլը ունին , որուն սպօր ըլլալը գիտենք : Միփրոփիւս մալ կայ համրիչածեւ , խիստ փոքրիկ հատիկներով . ընդհանրապէս երկերկու են . իրենց թիւը նախ քիչ է , բայց արագարար կը բազմանայ : Փտութեան վիպրիոններէն կարճ եւ բարակ վիպրիաններ ալ կը տեսնուին : Որովհետեւ այս միքրօօրկանիւղները երբեք չեն տեսնուիր առողջ եւ աղէկ մարսող շերամներու ներքը , բնական է որ Ֆլաշըրիով մեռնողները գէշ մարսողութիւն ունին , կարելի է գուշակել թէ այնպիսի արկած մը ի՞նչ ազդեցութիւն կրնայ ունենալ էակներո՞ւ վրայ , որոնք կ'ապրին միայն ուտելու համար , եւ արդարեւ՝ կ'ըսպառեն հրաշալի եւ անհաւատալի քանակութեամբ սնունդ :

Ֆլաշերի ախտաբանութիւնը

Հիմա պիտի ուսումնասիրենք թէ հիւանդ շերամներու աղիքներուն մէջ դտնուած օրկանիզմները արդեօք հիւանդութեան պատճառն են թէ արդիւնքը:

Արդեօք հիւանդութիւնները անաջ կ'երեւին՝ թէ շերամի մարտողութիւնը տկարացած ժամանակ:

Բէպրինի հիւանդութիւնը ծագում կ'առնէ մասնաւոր մակարուծէ մը, որ կը գտնուի շերամկիթերու մէջ եւ բնութեան մէջ անոնցմէ դուրս ուրիշ տեղ մինչեւ հիմա զբանուած չէ. շերամկիթին մէջ կ'անցնի այս մակարուծը թիթեանիկէն, իսկ շերամին մէջ կը մտնէ շերամկիթէն կամ շուրջը գտնուած հիւանդներէն. ուրեմն շերամկիթը իր մէջ ֆօրփիւսիւզներ չպիտի դնենայ, եթէ զինքը անող թիթեանիկը քօրփիւսքիւշներով վարակուած չըլլայ: Առողջ շերամկիթերէն դուրս ելած շերամները երբեք ֆօրփիւսիւզներ չպիտի ունենան, եթէ հիւանդներու հետ հաղորդակցութիւն չունենան:

Այս հիւանդութիւնը բէպրինէն կը տարբերի, երկու գլխաւոր կէտով նախ ֆլաշերին արաբներէն եւ մահացնող է, երկրորդ ժառանգականութեամբ չանցնիր յաջորդող սերունդներուն:

Քօրփիւսքիւշը կուգայ միշտ արդէն գտնուած հիւանդութենէ մը:

Ֆլաշերի մասին հարցը ըստ ըստին կը տարբերի, ո եւ է թիթեանի տերեւներ եթէ մանրուին եւ բարեխառն կամ սաք տեղ մը զրուին, անոնց երեսը կը ծածկուի ճիշդ այն պատառաբուծային օրկանիզմով. որոնք ֆլաշերիով մեռած հիւանդներու աղիքներուն մէջ կը գտնուին, հետեւաբար այն շերամները, որոնք մշտապէս կը կերակրուին դժուարամարս թիթեաններու տերեւներով, անոնց աղիքներուն մէջ ընդհանրապէս խմորում առաջ կուգայ. շերամները իրենց ընտելութեան վիճակով միքօրկանիզմներու կը դիմադրեն, եթէ ոչ՝ առանց բացառութեան բոլորն ալ պիտի մեռնէին եւ շերամաբուծութիւնը պիտի վերջանար:

Մարդկային ցեղն ալ մի քանի սերունդներ վերջը պիտի ջնջուէր, եթէ մարդու նօրմալ վիճակը չի դիմադրէր փտութեան միքօրկանիզմներու զաղթականութեանց, որոնք միշտ ներկայ են մեր աղիքներուն մէջ:

Բարեբախտաբար՝ բոլոր կենդանական աշխարհը այնպէս կազմուած է, որ յաճախ կրնայ կուռիլ ու դիմադրել զինքը քայքայել եւ փճացնել ուզող պատճառներուն դէմ: Այդ դիմադրութիւնը մասնաւորաբար Ֆլաշըրիի համար ոչ միայն կարելի է այլեւ շատ դիւրին:

Շերամի բնախօսական կազմութիւնը իրեն շատ նւաաստաւոր է, որովհետեւ մարտդական գործարաններու արտադրած հեղուկը ոչ միայն չի թողուր որ խմորման միջրոպները զարգանան որ բազմանան, այլ նոյն խակ զանոնք մարսելու կարողութիւնը ունի:

ՕՅԻ ԽԱՅՓԱՌԱՄԱԸ

Ընդհանրապէս մարտ եւ նոյեմբեր ամիսներուն մարգիկ կը խայթուին օձէն: Խայթուած մարգիկը եւ ընտանի կին դանիները կը հիւանդանան, շատ անգամ ալ կը մեռնին: Զանազան պայմաններու մէջ խայթումները տեղի կ'ունենան, առհասարակ օձ մը բռնել ուղելու, ծաղիկներ քաղելու կամ ձեռքը պատերու ծակը կոխելու ատեն:

Կենդանիներէն էն շատ վտանգի կ'ենթարկուին որսի շուները, որոնք կը խայթուին իրենց թաթերէն եւ քիթէն:

Խոտակերները մացառներու շուրջը կամ անտառներու մէջ արծուած ժամանակին կը խայթուին իրենց շըրթուքներէն: Դաշտերու մէջ փորերնին բաց քնացողները կը խայթուին կողերէն: Օձը երբեք չի խայթեր մարդը եթէ նեղը ինկած կամ անիէ վախցած չըլլայ: Օձը հողէն 20 հարիւրորդմէթը հազիւ կրնայ բարձրացնել իր գլուխը, այնպէս որ, եթէ երկար կօշիկներ (չիզմէ) հագնուի խածնուելու վտանգէն կ'ազատուի:

Խածնուած պահուն մարդը կամ կենդանին, տեղի մը խայթուածքին ցաւը կը զգայ, քիչ ետքը այրուածքի զգացողութիւն մը բոլոր անդամներու մէջ կը տարածուի եւ թմրութիւնը կը յաջորդէ:

Կենդանիները ցաւը կը յայտնեն աղաղակներով, անհանգստութիւնով եւ խայթուած անդամի կաղելովը: Խայ-

Թուեղէն քանի մը վայրկեան հաքը, խայթուածքը կը շրջապատուի մանիչակագոյն շրջանակով մը, յետոյ մերձաւոր մասերը շատ կուռին, այնպէս որ՝ սւռեցքը կրնայ տարածուիլ ամբողջ անդամին՝ նոյն իսկ մարմնոյն մէկ մասին վրայ:

Շուներու քթի եւ շրթունքներու խայթուածքէն կենդանիի զլուխը կ'ուռի եւ կը աճեւնայ, եթէ ուռեցքը հասնի մինչեւ քիթը եւ շնչափողը՝ կրնայ շնչանեղձ ըլլալ:

Թոյնը դպած մասերը շատ շուտով կը կապուանան, աւշային երակներու եւ խողովակներու անցած տեղերուն վրայ կը ձեւանան կարմիր, մանիչակագոյն եւ կապուտիկ բիծեր, որոնք անձեռտանալէ առաջ կը կանչին եւ յետոյ կը գեղնին:

Մասի խայթուածքները յաճախ թեւերը եւ անութի խոյլերը կ'ուռեցնեն, իսկ ոտքինները աճուկի եւ անդամներու խոյլերը:

Կը պատահի երբեմն, որ վէրքի երեսը պալար կապէ, մորթը մեռնի, քաղցքեղ առաջ գայ եւ արիւնահոսութիւն: Արկածէն հաքը մարդուն վրայ կ'երեւին հետեւեալ ընդհանուր նշանները. տափնայ, ստամոքսի ցաւեր, մարիլ, աչքերու խողառակ, գլխացաւ, կոկորդի զգայութիւն եւ սեղմում, դժուարին շնչառութիւն, սլաղ քրտինք, փսխել, փորճարութիւն, մորթի գեղնութիւն, մկնագելում, մըկնացնցում, երազանք, դառանցանք: . . .

Շուներու վրայ ալ գրեթէ միևնոյն նշանները կ'երեւին, կ'իյնան երբեմն եւ քանի մը վայրկեանէն չեն կըրնար ոտքի ելլել. մէկ քանին կը լիզեն իրենց մէջը եւ կզկզանքը, քիչ շատ երկար տան կը մնան կատարեալ մահաքունի (թմրութիւն) մէջ: Կրեթէ ամենքն ալ արիւն կը միզեն:

Երբ օձի խայթուածքի առաջին արկածները կ'անհետին, ընդհանրապէս հիւանդը կատարելապէս կը գտնէ իր նախկին առողջութիւնը: Սակայն երբեմն կը պատահի, որ հին երեւոյթներէն ուսանք շատ տարիներ ծածկուած մնան եւ երբեմն երբեմն, որոշ թուականներու, պարբերաբար երեւնան:

Այսպէս՝ մարդոց վրայ հաստատուած է. մէկը թունաւորուած ըլլալով օձի խայթուածքէ, ունեցած է երկարամեայ անարիւնութիւն, ուղեղի հիւանդութիւն եւ խանութեղէն մէկ սարի ետքն ալ աչքի կամ ականջի տկարութիւն:

Բայց աւելի հետաքրքիր է նշանակելու շատ տարիներու յաջորդաբար եւ պարբերաբար ցաւի քիչ կամ շատ ոյժով վերստին երեւիլը խածնուածքին վրայ եւ խածնուած ճիշդ եղանակին.

Օձի խայթուածքի թունաւորումին առաջքը առնելու համար.

1° Թոյնի արեան խառնուելը արգիւիել:

2° Տեղական մասնաւոր արկածներու առաջ երթալը արգիւիել:

3° Եթէ օրկանիզմը թունաւորուած է եւ թոյնի տարածուելովը եւ ընդհանուր նշաններ երեւին, անոնց դէմ մաքառիլ:

Որպէսզի թոյնը չի տարածուի, ամենէն առաջ պէտք է խածնուածքին վրայէն կապով վերքաւակիսն ոյժով կապել, այս կապը առժամանակեայ է, պէտք է կէս ժամ կամ սու առաւելն մէկ ժամեաքը քակել: Կապը թոյնը չի ոչնչացներ, բայց անոր շուտով օրգանիզմին մէջ տարածուիլը կ'ուշացնէ: Վէրքին մէջ թափուած թոյնը գուրս հանելու համար լաւագոյն միջոցն է անդիել վերքը եւ ոյժով ծծել անոր մէջ գտնուած արիւնը:

Ծծելը բնաւ վտանգաւոր չէ, բայց լաւ է երբեմն երբեմն թքնել եւ յետոյ լուալ բերանը:

Քիմիանի խուղարկութիւնները ցոյց տուին որ օձի թոյնին դէմ միակ եւ ոյժով դարմաններն են permanganate de potasse եւ acide chromique:

Խածնուած անդամը խածնուածքի վրայէն թաշկինակով կամ կապով մը կապելէ ետքը, ոյժով մը պէտք է ծըծել վէրքը, յետոյ Բրավազի ներարկոցով մը (չիրինկա) ջրի մէջ լուծուած բէրմանկանազի կամ ասիա քրօմիքի քանի մը կաթիլ ներարկել, ճիշդ օձի ակուններու մտած տեղերէն:

Աւելի ապահով ըլլալու համար կարելի է մէկ երկու նմանօրինակ ներարկումներ կատարել խածնուածքի քովերէն: Հիւանդութեան ընդհանուր նշանները անհետացնելու համար ալ հիւանդին պէտք է սալ ալքօլ կամ օղի պարունակող գրգռիչ եւ տաք ըմպելիքներ, անոնց մէջ գնելով նաեւ մի քանի կաթիլ անուշամիր:

Տեսէ՛ք «Գուլթան»ի Ա. տարւոյ 8 թիւը 142 երես:

ՓՇՐԱՆՔՆԵՐ

Ձիթենիի ճանճը (olearia). — Ձիթենիի մշակութեամբ զբաղող մը, քանի մը տարիներէ ի վեր նշմարած է որ ծծմբային ջուրերու ակերուն մօտերը տնկուած ձիթենիները

ձիթէնի ճանճ ըսուած միջատի նշաններէն ազատ կը մնան: Յիշեալ գիտողը 100 մաս ջուրի մէջ մէկ մաս ծծումբ լուծելով կը գարմանէ 20 ձիթենի՝ մզկղակներով սրսկելով. մէկ եղանակի մէջ չորս անգամ կը դեղէ ծառերը:

Այսպէս կը հաստատէ որ իր գարմանած ծառերը յաջորդաբար երկու տարի ազատ կը մնան ճանճի տուած վընասներէն:

Ձիերը ե՛րբ պիտի ե ֆերոցել. — Մեծ կալուածատէր մը այսպէս կը պատասխանէ.

« Ես իմ մշակող ձիերս մինակ իրիկունը քերոցել (թիմար ընել) կուտամ. առտուները փոշինին առնել տալով կը բաւականանամ: Ես համոզուած եմ, որ այս եղանակի շնորհիւ, ձիերը հանգիստ քուն կը քնանան եւ առատահան ալ նուազ ենթակայ կ'ըլլան պաղկու: Քերոցի (խաշաղու) գործածութիւնը կը գրգռէ մորթը եւ ցուրտերու արամագիր կ'ընէ, մանաւանդ որ առատահան ախոռի սաքօղին կը յաջորդէ յանկարծակի գուրտի պաղ օդը:

Երբ երեկոյեան խնամուի կենդանին, մորթի զգայնութիւնը կ'անհետանայ դիշերը: Ետտ անտակէտով խնամքի այս եղանակը իր առաւելութիւնները ունի մանաւանդ որ ձիերուն հաճելի միանգամայն տուղջարար է որ միշտ առաջ ազատին քրտինքէ, փոշիէ եւ ցեխէ: Մինչդեռ կատարեալ խնամքը առտուան կերի ժամանակ թէ տրուէր, ձիերը շատ անհանգիստ պիտի ընէր »:

Կարելի է ընգունիլ, որ վերոյիշեալ խնամքը ոչ միայն կը պահպանէ շատ մը հիւանդութիւններէ, այլ եւ մինչեւ իրենց ծերութեան հասակը սյժով կը պահէ:

Հողերը ճանչնալ իրենց վրայ բուսած խոտերէն:

Կրային հողերու վրայ կը բուսնին խոճկորակ (tussilage), վայրի կղերջ, սափուրոռ ուռուտ (gesse tubereuse), ծաւալուն դաշտաբոյս (agrostis traçante):

Կարծախարային (granitique) հողերու վրայ ծիրանեփայլ մատնուկ (digitale pourprée), լեռնային փոնչուկ (arnica des montagne). սղկուզաւոր թանթրուէնի (միւրվէր) սպիտակ հրանուկ (տիւյիւն չիչէյի), արքայահեր (զմաւուրա), չազանակենի:

Կայծֆարային հողերու վրայ . աղաւնարօտ (spergule) , վայրի խոտածաղիկ (pensée) , սէզ , շարոցաւոր վարսակ , պղտիկ թրթնջուկ (գուզուզուլալը) , խոպանուկ (ajoné) , ցախաւել , ծովային շոճի (pin maritime) :

Խարի քրջիլը . — Անձրեւներէ եւքը , եթէ խոտը չորնալու ժամանակ չունենայ մարգագետնի վրայ . կարելի է դէզ ընել , թէեւ քիչ մը սեւ կ'ըլլայ դէզի մէջ չորցած խոտը , սակայն կենդանիները ախորժակով կ'ուտեն . միայն թէ յաջորդաբար խաւ մը խոտ խաւ մ'ալ յարդ դնելու է դէզը կապուած ժամանակ , որպէսզի յարդը թրջած խոտը չորցնէ եւ մքլելու վտանգէն ազատէ դէզը :

Թրեւիներու ծայրերու նիւղերուն հիւսնդութիւնը . — Այս հիւանդութեան յատկանիշերն են . արտաքին տեսքով ճիւղերու ծայրերը չորնալը եւ անոնց վրայի տերեւներու թափուիլը կը նշմարուի :

Ուշադրութեամբ քննելով հիւանդ ճիւղերը կը տեսնուին անոնց վրայ տեսակ մը երկար բաւական խորունկ թուխ , մոխրագոյն քաղցկեղեր , հիւանդութիւնը կը սկսի նախ շատ թուխ եւ զանազան մեծութեամբ բիծերով , որուն պատճառը միքրոպ մ'է bacterium mori անուանով , որ կ'ապրի փայտի հիւսուածքներով :

Հիւանդութեան անունն է թթենիի բակտրիական (bactérienne du murier) :

Հիւանդութեանը դէմ կոռելու համար պէտք է .

ա.) Չորցած ճիւղերը վերջին քաղցկեղէն 20 հարիւրորդամէթր վարէն կտրել :

բ.) Կտրուած հիւանդ ճիւղերը խնամքով վառել :

գ.) Ճիւղի Կտրուած մասը լուանալ 100 մաս ջուրի մէջ 45 մաս երկաթի ծծմբատ (sulfate de fer) լուծուածքով :

դ.) Տերեւներու թափելէն ետքն ալ պատրաստել հետեւեալ հեղուկը՝

10 քիլօ երկաթի ծծմբատ

4 քիլօ կիր

100 լիդր ջուր : Լուանալ ծառերը կամ մղեղակով սրսկել :

Բուսակերերը . — «Ֆլանս Միլիդէն» թերթը Տօք. Մարշալի կարծիքը վկայութեան կը կանչէ բոյսերու առողջութեան վրայ ունեցած բարերար ազդեցութեանը մասին :

Կ'ըսէ թէ՛ դիտուած է որ ընդհանրապէս ամենէն ոյժով գործաւորները բոյսերով կը սնանին , ինչպէս են Իրլանդ

տացիները, որոնք գրեթէ գեանախնձորով կ'ապրին, Ե-գիպտացի նաւավարները եւ գործաւորները միայն կ'ուտեն սեխ, սոխ, ոլոռն, ոսպ, արմաւ եւ եգիպտացորեն: Շիլիի հանքագործերը՝ որոնք շատ ոյժով են, բոլորովին բուսական սնունդներ կ'ստանան: Չմիւռնիոյ բեռնակրերը կ'ապրին միայն հացով եւ բանջարեղէնով: Պոլսոյ ջրկիրները, բեռնակիրները եւ նաւավարները հազիւ թէ հացէ, թուղէ եւ պաուղներէ զատ ուրիշ սնունդ կ'ստանան, սակայն ամեն մարդ գիտէ անոնց շատ ուժով մարդիկ ըլլալը: Հիմալայի բնակիչները՝ որոնք հէրքիւլեան ժողովուրդ մ'են, միայն բրինձով կ'ապրին. վերջապէս աւելի հեռու չերթալու համար, մեր գիւղերու բանւորները, մեր ոյժեղ Քրանսացի գիւղացիները, որոնք թէեւ բացառաբար միս կ'ուտեն, սակայն ոյժով եւ առկունութեամբ, առանց ո եւ է համեմատութեան, կը գերազանցեն շատ մսակեր քաղաքի գործաւորներ:

Հաւիթի քարտուքիւնը ինձեզ. — Մէկ լիզրա մաքուր ջուրի մէջ լուծեցէք 125 կրամ ալ, քննուելիք հաւկիթները մի առ մի գրէք այդ ջուրին մէջ:

Նոյն աւուր հաւկիթը տակը կ'իջնէ, երկու աւուրը ջուրին մէջ կը լողայ, հինգ օրէն աւելի հինը ջուրին երեսը կ'ելլէ, որքան հին ըլլայ հաւկիթը՝ այնքան շատ վեր կ'ելլէ ջուրի երեսէն:

Ինկած կենդանիները ոտի հոսելը. Յաճախ կը պատահի որ արկածով մը կամ չափազանց յոգնութենէ մը կենդանին գետինը իյնայ եւ ալ չուզէ ոտքի կանգնիլ:

Ահաւասիկ գիւրին եւ պարզ միջոց մը.

Բուռ մը նուրբ խոտով բաւ է քթի ծակերը խծկել, օդի պակասութիւն զգալով կենդանին՝ իսկոյն կը կանգնի օդ չնչկու համար: Եթէ խոտ չի գտնուի ձեռքի սակ, կարելի է թուղթ եւ քուրջ գործածել:

Այս միջոցը բնաւ չի սխալիլ եւ գործնական է:

Ելակը եւ յոդացալը. — Հին ժամանակներէ ի վեր յօդացաւ ունեցողներուն ելակ ուտել կը յանձնարարէին եղեր Ծրանսայի մէջ. իբրև ալ ելակը բարերար ազդեցութիւն մը ունի յօդացաւէ առապող հիւանդներուն վրայ:

Եղած խուզարկութիւնները բնական այդ դարմանի՝ պղպիկ խնդրոյն լուծումը գտած են, ելակները կը պարունակեն acide salicylique ըսուած նիւթը որ ոյժով դարման մ'է յօդացաւի դէմ:

250 կրամ ելակի վրայ կատարելով փորձեր, գտած են որ մեծ քանակութեամբ acide salicylique կը պարունակէ:

Ահաւասիկ ուրեմն ելակներու յօդացաւի վրայ ունեցած բարերար ազդեցութեան բացատրութիւնը:



Գ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

Պ Ո Ի Թ Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ո Վ

Տ ն օ ր Կ ն

Փ. Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն

Աշխատակիցներ Հայ ու Ֆրանսացի ծանօթ մասնագետներ

Նոր Շրջանը պիտի սկսի քիչ ատենէն .

12 թիւ « Գութան » կը կազմէ Մէկ Շրջան : Փոխանակ 16 էջի պիտի հրատարակուի 24 էջով նոր Շրջանի « Գութան »ը :

Բաժանորդագին

Արտամահմանի	համար	12	թիւը	12	Ֆրանք ,
Տաճկաստանի	—	—	—	10	»
Պարսկաստանի	—	—	—	10	»
Ռուսիոյ եւ Կովկասի	—	—	—	5	րուբլի
Ամերիկայի	—	—	—	3	առլար

Մուտք ունի ամեն երկիր .

Նոր Շրջանի բաժանորդագրութիւնը ԿԱՆՆԻԿ է :

« Գութան »ը պիտի հրատարակուի բոլորովին նոր ծրագրով : Գիւղացիի եւ հողագործի թերթը պիտի ըլլայ միաժամանակ տալով քաղուածքներ բոլոր թերթերէ :

Կը խնդրուի ամեն Հայ թերթերէ, փոխադարձաբար զնեւ « Գութան »ի յայտարարութիւնը :

Թղթակցութիւն եւ Բաժնեգին զրկել նոր հասցէին :

Նոր հասցէ ,
K. Médzadourian, 53 Rue Boulard. Paris (14^e)